

հը «հարցուց զլիաւոր Հայուն թէ՛ Վրացի՞ք թէ ֆռանկները իրր լաւագոյն քրիստոնեաներ կը նկատուէին իր աղղէն, որուն Խօջայ Նազար զիւանադիտօրէն պատասխանեց թէ՛ նախայիշեալները աւելի լաւ ծոմ կը պահէին: Այս Շահը բոլոր ծոմապահութեանց հակառակ ըլլալով, աւելի որոշ կերպով յայտարարեց թէ՛ իր հարցումը անոնց կրօնական օրէնքները պահելու մասին էր, ինչպէս նաեւ իրենց ծիսակատարութեանց մասին, որուն վրայ Խօջայ Նազար Լատինները գովեց:»²⁵⁾

1621 թուականին հայերը Սպահանի մէջ ենթարկուեցան բռնի մահապատեանացման ըսպառնալիքին: «Հայերու միջոցաւ Շահը անձնապէս կը շահէր մետաքսի առեւտուրէն: (Շահը) իմանալով իրարանցումին մասին նաեւ ի (Նոր) Զուլայ, եւ թէ ապրանքով բեռցած կարաւաններ ճամբաներուն վրայ կանդ կ'առնեն, ան (Շահը) Սպահանի արքունիքը վերադարձաւ օգոստոս 20, 1621-ին եւ լուր գրկեց Խօջայ Նազարին, ցեղին (Հայ) զլիաւորներէն, զայն ապահովցնելով, որ այլեւս հայերը կրօնքի պատճառաւ չպիտի նեղէ:»²⁶⁾

* * *

1623-ին գրուած է Նոր Զուլայի վանքին թիւ 93 նօտրգիր, թղթեայ, երկսին կաշեկազմ զանազան հարցմանց եւ մեկնութեանց հատորը: Գրէն յիշատակարանը էջ 360-ը. «Փառք...: Եւ արդ ես... Սիմոն Զուլայեցի սուտանուն քահանայ... կատարեցի զգիրքս որ կոչի հարցմանց մեծ հռետորին Գրիգորի. (Տաթևացի) մեծ թուականիս հայոց ՌՀԲ (1623) ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի ի թագաւորութեան Պարսից Շահապասին, եւ առաջնորդութեան մերոյ գեօղիս Զուլայու խաչատուր վարդապետի, Սաւայ Նազարին...:»

Գրէ վերջ Հայ տիրամած կրօնական հորիզոնին վրայ երեւցաւ Մովսէս վրդ. Տաթևացի: Անոր համբաւը հասաւ Խօջայ Նազարին եւ, ըստ Դաւրիթեցիի, «նա եւ գլուխն Զուլայեցուց, ողորմութեանցն Քրիստոսի արժանի Խօջայ Նազարն գրեաց ի վերայ որդւոյ իւրոյ

Խօջայ Սարֆրադին, որ յաւուրսն յայնօսիկ էր յաշխարհն Ատրպատականի, մեծարել զվարդապետն Մովսէս յԱսպահան, որոց եկեալ եւ առեալ զՄովսէս տարան յԱսպահան:»²⁷⁾

Հ. Ակինեան Մովսէսի այս առաջին այցելութիւնը Սպահան կը նշանակէ 1624-ին:

Այս ժամանակներուն էր, որ Շահին ահանջը հասաւ, որ Մովսէս վարդ. Տաթևացի գրեթէ մոմ սպիտակացնելու արհեստը: Շահը հետաքրքրուած՝ հրամայեց որ Մովսէս իրեն ներկայացուի: Հաւանաբար, 1627-ի յունուարին, Պաղտատ թրքաց ղէմ կուռի մեկնելէն առաջ, Շահը ընդունեց Մովսէսը: Երբ տեսաւ անոր զնահատելի կարողութիւնը, հրամայեց, որ Մովսէս երեք պարսիկ աշակերտներ պատրաստէ այդ արհեստին զաղտնիքներուն մէջ:

Կ'երեւայ թէ Մովսէս գլուխ հանեց գործը 1626-ին, տարին դեռ չլրացած: Շահը խիստ գոհ մնաց արդիւնքէն, մանաւանդ Մովսէսի երեւոյթէն:

«Եւ յետ սուղ ինչ աւուրց հասեալ էր ի վերայ աւուրք մեծի տօնի յայտնութեան (6 յունուար 1627) Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ յաւուրս յայտնիկ Զուլայեցի Խօջայ Նազարն եւս ի ֆահրապատ էր, հրամայեաց Շահն Խօջայ Նազարին, թէ պատուիրեալ՝ վարդապետին (Մովսէս), լաւագոյն իմն հողաբարձութեամբ տեսանել զպատրաստութիւն՝ որ վասն Զրօրհնէքին, զի հանդիսաւոր լիցի: Եւ յաւուր տօնին՝ յորժամ էր վարդապետն Մովսէս ի վերայ գետոյն յօրհնել զՅուրն. ընդ գեղեցիկ յարմարումն զարդուցն, եւ ընդ կարգաւորաբար շարժումն, եւ ի կանդնիւն պաշտօնէիցն, յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ, եւ խանդաղատեալ ի վերայ Մովսէսի: Եւ զայս իմանամք առնել խնամ ամենակալին Աստուծոյ՝ որ զսիրտ ամենայն թագաւորաց ունի ի ձեռին, եւ ոչ թէ հաճոյական արարմունքն Մովսիսի. այլ եւ Խօջայ Նազարն եւս բանս բարիս յոյով խօսեցեալ էր ընդ Շահին՝ վասն Մովսէս վարդապետին: Իսկ Շահն հարցեալ էր ի Խօջայ Նազարէն թէ, զի՞նչ խնդիրք ունի վարդապետն ի սրտի իւ-

25) Անդ՝ էջ 245:

26) Անդ՝ էջ 257:

27) Պատ. Դաւրիթեցույ, էջ 297: